ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-28/26-IS/IAE

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 640 267 000 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,

2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 640 267 000 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀՎՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Երևան, Չարենցի 15 Հ/հ՝ 900018005240 ՀՎՀՀ՝ 01503104 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝
(ստորագրություն) Կ. S.	(ստորագրություն) Կ. S.
Կարեն Բորիսի Ղարիբյան	Արսեն Ալեքսանդրի Բոբոխյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Արսեն Բոբոխյան Ալեքսանդրի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-28/26-IS/IAE պայմանագրի գնի վերաբերյալ՝ 640 267 000 << դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Կ. Տ.

Արսեն Ալեքսանդրի Բոբոխյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳԾ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	70
Այլ պարբերականում հրապարակում՝	90
Գրքեր, մենագրություններ՝	50
Գիտաժողովի նյութեր՝	250

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Արսեն Ալեքսանդրի Բոբոխյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Բաբաջանյան Աստղիկ Ալեքսանդրի

Կ. S.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	613 133 156	122 626 631	153 283 289	153 283 289	183 939 947
2.	տնտեսական ծախսեր՝	7 590 000	1 518 000	1 897 500	1 897 500	2 277 000
3.	այլ ծախսեր՝	19 543 844	3 908 768	4 885 961	4 885 961	5 863 154
Ընդամենը՝		640 267 000	128 053 399	160 066 750	160 066 750	192 080 101

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ (ստորագրություն) Արսեն Ալեքսանդրի Բոբոխյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ (ստորագրություն) Լիանա Լորենցի Առուստամյանց

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

<< դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**7 590 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	2 500 000
2.	*գազի ծառայություն*	3 500 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	400 000
4.	*կապի ծառայություն*	1 100 000
5.	*աղբահանություն*	90 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**19 543 844**
1.	վերանորոգման աշխատանքներ	2 000 000
2.	գույք, սարք, սարքավորումներ, նյութեր	400 000
3.	գիտական միջոցառումների կազմակերպում	400 000
4.	հրատարակչական ծախսեր	4 000 000
5.	արշավախմբեր, գիտարշավներ (գործուղումներ, աշխատավարձ՝ ներառյալ հարկը՝ պեղող բանվորներ, վերականգման աշխ և այլն)	12 000 000
6.	այլ ծախսեր	743 844

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ (ստորագրություն) Արսեն Ալեքսանդրի Բոբոխյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ (ստորագրություն) Լիանա Լորենցի Առուստամյանց

Կ. Տ.

Հավելված 5

«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝ Ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում, հնագիտության, ազգագրության, ազգաբանության, էթնոսոցիոլոգիայի, բանագիտության, վիմագրության, ֆիզիկական մարդաբանության, հնակենսաբանության ոլորտներում հիմնարար և կիրառական հետազոտությունների կատարում, հնագիտական պեղումների, հուշարձանների բարեկարգման, ամրակայման աշխատանքների իրականացում, ազգագրական, բանագիտական գիտարշավների կազմակերպում՝ ՀՀ տարածքում և Սփյուռքում, նյութական մշակութային արժեքների վերականգնում, անալիզների, ճարտարապետական չափագրությունների իրականացում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, գիտաժողովների կազմակերպում, ներհանրապետական և միջազգային գիտական համագործակցություն, արխիվի, գրականության թվանշայնացում, գիտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի պահպանում և թարմացում, գիտական հետազոտությունների հրատարակություն:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.

Գիտական պատշաճ մակարդակով և սահմանված ժամկետում կատարել ծրագրով նախատեսված աշխատանքները:

Սահմանված ժամկետի ավարտին ներկայացնել գիտական հաշվետվությունը:

Ամբողջ ծրագրի կատարման ընթացքում ներկայացնել հրատարակության պատրաստ ուսումնասիրությունները:

Ծրագրի շրջանակներում կատարվող թեմաները և գիտական միջոցառումները պետք է նպաստեն գիտության տվյալ ոլորտի առաջընթացին, լինեն արդիական:

Հնարավարինս թարմացնել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան:

Ծրագրի շրջանակներում զարգացնել միջազգային գիտական համագործակցությունը:

Ծրագրի կատարման աշխատանքներում ընդգրկել երիտասարդ կադրերի:

Հրատարակության ներկայացնել համակողմանի քննարկված և բանախոսների դրական եզրակացությամբ գիտական ուսումնասիրություններ:

4. Աշխատանքի բովանդակությունը.

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի շրջանակներում 2026 թվականի համար նախատեսված ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքները ներառելու են հետևյալ բաղադրիչները. 1. Հիմնարար և կիրառական հետազոտություններ: 2. Դաշտային հնագիտական հետազոտություններ (պեղումներ), ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավներ: 3. Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում: 4. Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ: 5. Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ: 6.

Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն: 7. Միջազգային համագործակցություն: 8. Գիտական ուսումնասիրությունների հրատարակում: 9. Կադրերի պատրաստում և վերապատրաստում: 10. Գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում: 11. Ամառային դպրոցների կազմակերպում: 12. Հնագիտական տեղեկատվական համակարգի լրամշակում: 13. Ինտերնետային կայք: 14. Գրադարանի համալրում: 15. Պեղվող հուշարձանների պահպանության կազմակերպում, կոնսերվացման և թանգարանացման աշխատանքներ:

Ա-Բ. Հիմնարար և կիրառական հետազոտություններ, դաշտային աշխատանքներ

Իրականացվելու են 10 ենթածրագրերով, որոնք իրենց հերթին ներառում են ինստիտուտի գիտական անձնակազմի անհատական և խմբային թեմաները:

1. Հնագիտության բնագավառում հիմնարար հետազոտությունները կատարվելու են «Հնագույն և Հին Հայաստան: Հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն», «Քարաշամբի դամբարանադաշտի պեղումներ և ուսումնասիրություն», ենթածրագրերով: Գիտահետազոտական աշխատանքների նպատակն է լինելու՝ 1. վեր հանել լեռնաշխարհի բնակեցման սկզբնափուլերի առանձնահատկությունները, 2. ուսումնասիրել վաղագույն երկրագործական մշակույթների ի հայտ գալու, երկրագործ և անասնապահ հնագույն հասարակությունների տարածման առանձնահատկությունները, Արաքսից հյուսիս ընկած տարածքների յուրացման հիմնական փուլերը, 3. կոմպլեքսային հասարակություններին բնորոշ հասարակական ու սոցիալական ինստիտուտների կայացման գործընթացները, վաղագույն պետական կազմավորումների սաղմնավորման ու զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները, տնտեսության ոլորտում կատարված խոշորամասշտաբ փոփոխությունները, 4. համակողմանի ուսումնասիրվելու են վերջին տարիներին Հին Հայաստանի մայրաքաղաքների պեղումներից հայտնաբերված նյութերն ու տվյալները՝ Վանի թագավորության շրջանից մինչև քրիստոնեության տարածումը: 5. Միջնադարյան Հայաստանի տարբեր հնավայրերի և Դվին մայրաքաղաքի պեղումների արդյունքների ուսումնասիրությամբ ցույց են տրվելու քրիստոնեական քաղաքակրթության խոշորագույն կենտրոններից մեկի ձևավորման և ն զարգացման առանձնահատկությունները:

Նախատեսված ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքն ապահովելու համար իրականացվելու են դաշտային հետազոտություններ՝ 20 հնագիտական արշավախմբերով: Ենթածրագրերի շրջանակներում շարունակվելու են արտերկրի գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող նախատեսված հետազոտությունները: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվելու են նախորդ տարիներին և 2026 թ. հայտնաբերված մշակութային արժեքների անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, վերականգնում, վավերագրում և թանգարանացում, հուշարձանների գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ:

2. «Դիվան հայ վիմագրության պրակների կազմում և հրատարակություն» ենթածրագրով շարունակվելու են Դիվան հայ վիմագրության Արմավիրի կազմելու և հրատարակության պատրաստելու աշխատանքները: Հրապարակվելու են արդեն պատրաստ Արագածոտնի և Կոտայքի պրակները:

3. Ազգագրության, ազգաբանության, էթնոսոցիոլոգիայի բնագավառներում հետազոտությունները կատարվելու են «Ավանդականը և նորը հայոց մշակույթում. պահպանման և զարգացման խնդիրներ», «Առօրեականությունը անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն», «Կիրառական ազգագրություն», «Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (ավանդույթ և արդիականություն)» ենթածրագրերով: Ուսումնասիրությունները տարվելու են՝ 1. Հայոց նյութական ու հոգևոր մշակութային ժառանգության ավանդական ազգագրական ուսումնասիրություն, 2. Արդի

էթնոմշակութային և հասարակական գործընթացների ուսումնասիրություն, 3. Արխիվային նյութերի ու վավերագրերի նախապատրաստում հրատարակության, 4. Հիշողության մարդաբանություն, 5. Հայաստանի սոցիալական շարժումների մարդաբանական ուսումնասիրություն, Տոնի մարդաբանություն, 6. Հայաստանի քաղաքների մարդաբանական ուսումնասիրություն, 7. Ենթաէթնիկ և սոցիալական խմբերի մարդաբանական ուսումնասիրություն, 8. Վիզուալ մարդաբանական ուսումնասիրությունների համար շտեմարանի կազմում, 9. Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային փոխակերպումները Հայաստանում և մի շարք այլ ուղղություններով:

4. Բանահյուսության բնագավառում հետազոտությունները կատարվելու են «Հայ բանահյուսություն: Համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ», «Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի զուգադրական ուսումնասիրություն» ենթածրագրերով: Հետազոտությունների հիմնական նպատակն է բանահյուսական նյութերի պարբերաբար գրառումները, համակարգումը, արխիվավորումը (տեղբանկի ստեղծումը), համահավաք գիտական բնագրերի հրատարակումը, ուսումնասիրումը, Սասնա ծռերի անտիպ պատումների և հայ հմայական ու ժողովրդական աղոթքների բանահավաքների կազմումը և հրատարակումը, հայ ժողովրդական հեքիաթների նշանացանկի կազմումը, «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարով նախատեսված հեքիաթների հերթական հատորների հրատարակության նախապատրաստումը:

5. Շարունակվելու են «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ենթածրագրով նախատեսված հետազոտությունները:

6. Շարունակվելու են հնագիտության, ազգագրության, բանահյուսության բնագավառներում ձեռք բերված արդյունքներին ու հեռանկարային զարգացումներին վերաբերվող միջազգային, հանրապետական գիտաժողովների կազմակերպման աշխատանքները:

Գ-Ե) Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ

Ինստիտուտի դաշտային հետազոտությունները պարտադիր ենթադրում են հայտնաբերված մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, գտածոների անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, հնավայրերի գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ:

Զ) Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն

Ինստիտուտի ազգագրական և բանահյուսական արխիվը պարունակում է ինչպես մինչև առաջին համաշխարհային պատերազմը Հայաստանի (Թուրքիայի արևելյան նահանգների) բնակչության, մշակույթի առանձին տարրերին վերաբերվող լուսանկարչական և այլ արխիվային փաստաթղթերի հավաքածուներ, այնպես էլ Կովկասյան և առաջավորասիական մշակույթների վերաբերյալ կարևոր գիտական նյութեր: Ծրագրով նախատեսված աշխատանքները տարվելու են երեք ուղղությամբ՝ 1. արխիվում առկա նյութերի մանրամասն շտեմարանի ստեղծում, 2. կարևորագույն նյութերի հրատարակության նախապատրաստում, 2. թվայնացում:

Է) Միջազգային համագործակցություն

Ծրագրի շրջանակներում շարունակվելու են արտերկրի գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող դաշտային հնագիտական ուսումնասիրությունները: Արտերկրի տարբեր գիտական կենտրոնների հետ իրականացվող դաշտային հետազոտական ծրագրերի շրջանակներում ընթացիկ տարում կկազմավորվեն են 10 համատեղ հնագիտական արշավախմբեր:

Ը) Գիտական ուսումնասիրությունների հրատարակություն

Ծրագրի կատարման կարևորագույն արդյունքները նախատեսվում է հրատարկել ինստիտուտի ֆինանսական միջոցներով: 2026 թ. համար ծրագրվել է հրատարակել «ՀԱԻ աշխատություններ» հանդեսի 1 հատոր, 5 մենագրություն և ժողովածուներ: Հոդվածներ և մենագրություններ կհրատարակվեն արտերկրում՝ օտար լեզուներով:

Թ-ԺԷ) Կադրերի պատրաստում, գիտաժողովների, կլոր սեղանների, սեմինարների, ամառային դպրոցների կազմակերպում, հնագիտական տեղեկատվական համակարգի և ինտերնետային կայքի լրամշակում, գրադարանի համալրում, ընթացիկ վերանորոգումներ, հուշարձանների պահպանությունն, կոնսերվացում և թանգարանացում

Ծրագրի շրջանակներում 2026 թվականին ինստիտուտը կկազմակերպի 3 միջազգային և 5 հանրապետական գիտաժողով նվիրված Հայաստանի և հարակից երկրների հնագիտության, ազգաբանության, բանագիտության հիմնախնդիրներին: Գիտաժողովների նյութերը առանձին ժողովածուներով կհրատարակվեն: Նախատեսվում է շարունակել ամառային դպրոցների և մեթոդաբանական սեմինարների կազմակերպման պրակտիկան: Շարունակվելու են հնագիտական տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքները, կատարելագործվելու է կայքը:

Կազմակերպության տնօրեն՝ _____ Արսեն Բոբոխյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Արսեն Բոբոխյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 6
«29» դեկտեմբերի 2025թ.
N 1-28/26-IS/IAE պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ I փուլ	1. Ծրագրով նախատեսված ենթածրագրերի և թեմաների ընթացիկ տարվա աշխատանքների պլանի քննարկում և հաստատում ըստ բաժիների և գիտահետազոտական խմբերի, 2. Ընթացիկ պեղումների գիտական հաշվետվությունների կազմում և քննարկում, 3. Մշակութային արժեքների վերականգնման, վավերագրման և թանգարանացման ընթացիկ աշխատանքներ, 4. Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, 5. Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն, 6. Կադրերի պատրաստում և վերապատրաստում, 7. Գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում, 8. Դաշտային հնագիտական հետազոտությունների, ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավների նախապատրաստում և արշավախմբերի պլանների հաստատում, պեղումների թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերի և հայտերի պատրաստում, 9. Ենթակառուցվածքի պահպանության և բնականոն գործունեության ապահովման ընթացիկ աշխատանքներ, 10. Արտերկրի գիտական կենտրոնների հետ պլանավորած հետազոտություններ, 11. Ասպիրանտների և հայցորդների հետազոտական աշխատանքներ, 12. Արխիվային նյութերի ուսումնասիրություն, 13. Գիտական ուսումնասիրությունների հրատարակում:	Գիտական հետազոտություններ, տվյալների ու նյութերի համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, գրչանկարում, լուսանկարում, լաբորատոր անալիզներ, գիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում, ուսումնասիրությունների հրատարակության նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, կայքի գործարկում, գիտաժողովների կազմակերպում, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության դաշտային ուսումնասիրություն:	2026 թ. հունվար-մարտ
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ II փուլ	1. Հիմնարար և կիրառական հետազոտությունների շարունակում՝ ըստ անհատական և խմբային թեմաների, 2. Դաշտային հետազոտական աշխատանքներ, 3. Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ, 4. Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, 5. Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն, 6. Կադրերի պատրաստում և վերապատրաստում, 7. Մշակութային արժեքների վերականգնման, վավերագրման և թանգարանացման ընթացիկ աշխատանքներ, 8. Գիտաժողովների կազմակերպում, 9. Գիտական ուսումնասիրությունների	Գիտական հետազոտություններ, տվյալների և նյութերի համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, գրչանկարում, լուսանկարում, լաբորատոր անալիզներ, գիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում, ուսումնասիրությունների հրատարակու-	2026թ. ապրիլ-հունիս

		հրատարակում, 10. Ենթակառուցվածքի պահպանության և բնականոն գործունեության ապահովման ընթացիկ աշխատանքներ, 11. Արտերկրի գիտական կենտրոնների հետ պլանավորած հետազոտությունների շարունակում, 12. Ասպիրանտների և հայցորդների հետազոտական աշխատանքներ, 13. Արխիվային նյութերի ուսումնասիրություն, 14. Գիտական հետազոտությունների հրատարակում:	թյան նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, գիտաժողովների կազմակերպում, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության դաշտային ուսումնասիրություն՝ պեղումների և գիտարշավների կազմակերպում:	
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ III փուլ	1. Հիմնարար և կիրառական հետազոտությունների շարունակում՝ ըստ անհատական և խմբային թեմաների, 2. Դաշտային հետազոտական աշխատանքներ, 3. Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ, 4. Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, 5. Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն, 6. Կադրերի պատրաստում և վերապատրաստում, 7. Մշակութային արժեքների վերականգնման, վավերագրման և թանգարանացման ընթացիկ աշխատանքներ, 8. Սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում, 9. Գիտական ուսումնասիրությունների հրատարակում, 10. Ենթակառուցվածքի պահպանության և բնականոն գործունեության ապահովման ընթացիկ աշխատանքներ, 11. Արտերկրի գիտական կենտրոնների հետ պլանավորած հետազոտությունների շարունակում, 12. Ասպիրանտների հետազոտական աշխատանքներ, 13. Արխիվային նյութերի ուսումնասիրություն, 14. Գիտական հետազոտությունների հրատարակում:	Գիտական հետազոտություններ, տվյալների և նյութերի համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, գրչանկարում, լուսանկարում, լաբորատոր անալիզներ, գիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում, ուսումնասիրությունների հրատարակության նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, գիտաժողովների կազմակերպում, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության դաշտային ուսումնասիրություն՝ պեղումների և գիտարշավների կազմակերպում:	2026թ. հուլիս-սեպտեմբեր
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ IV փուլ	1.«Հնագույն և Հին Հայաստան: Հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն», 2. «Քարաշամբի դամբարանադաշտի պեղումներ և ուսումնասիրություն», 3. «Դիվան հայ վիմագրության պրակների կազմում և հրատարակություն», 4. «Ավանդականը և նորը հայոց մշակույթում. պահպանման և զարգացման խնդիրներ», 5. «Առօրեականությունը անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն», 6. «Կիրառական ազգագրություն», 7. «Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (ավանդույթ և արդիականություն)», 8. «Հայ բանահյուսություն: Համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ», 9. «Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի զուգադրական ուսումնասիրություն», 10. «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ենթածրագրերի կատարման ընթացիկ հաշվետվությունների նախապատրաստում և քննարկում, 11. Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, 12. Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, 13. Արխիվային նյութերի	Գիտական հետազոտություններ, տվյալների համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, լաբորատոր անալիզներ, ուսումնասիրությունների՝ հրատարակության նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, կայքի գործարկում, գիտաժողովների կազմակերպում, գիտական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում:	2026թ. հոկտեմբեր-դեկտեմբեր

		մշակում և ուսումնասիրություն, 14. Գիտական ուսումնասիրությունների հրատարակում, 15. Կադրերի պատրաստում և վերապատրաստում, 16. Մեկ միջազգային, երկու հանրապետական գիտաժողովների, ընթացիկ սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում, 17. Դաշտային հնագիտական հետազոտություններ (պեղումներ, ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավներ), 18. Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ:		

Կազմակերպության տնօրեն՝ _____ Արսեն Բոբոխյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Արսեն Բոբոխյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)